Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի Վիլյամ Սարոյանի անվան հ. 138 հիմնական դպրոցի ՄԿԱ տնօրենի տեղակալի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների

Հիմնվելով ՄԿԱ-ի պաշտոնային պարտականությունների վրա, օգտվելով դպրոցի զարգացման ծրագրից՝ կազմվել է դաստիարակչական աշխատանքի ծրագիր և ներկայացվել է դպրոցի տնօրենի հաստատման: Դպրոցի կոլեկտիվը մեծ պատասխանատվությամբ է նվիրվում աշխատանքին և կատարում իր առջև դրված խնդիրները, որի շնորհիվ լիարժեք ու համակողմանի է դառնում դպրոցական կյանքը:

Երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են կրթության և դաստիարակության արդյունավետությանն ուղղված միջոցառումներ, համակարգվել է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները: Միշտ ուշադրության կենտրոնում է եղել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կիսամյակում սերտ կապ ու համագործակցություն է ստեղծվել դպրոցի և սովորողների ընտանիքների միջև: Առանձնակի ուշադրության են արժանացել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները (օգնությունը ծնողխորհուրդների կողմից, անվճար դասագրքերի ստացում): Պատշաճ ձևով կազմակերպվել է սովորողների հանգիստն ու ժամանցը:

Աշխատանք է տարվել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ: Հսկողություն է իրականացվել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության, վարքի և հաճախելիության նկատմամբ:

Աշխատանքներ են տարվել կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման ուղղությամբ: Դպրոցի աջակցող թիմի հետ համատեղ կազմվել են անհատական ուսուցման պլաններ: Ապահովվել է սովորողի ընտանիքի հետ սերտ կապն ու համագործակցությունը:

Դպրոցի ՍԴԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է աշակերտական խորհրդի աշխատանքը, պայմաններ են ստեղծվել դպրոցի հասարակական վերահսկողության (աշակերտական հերթապահության և աշակերտական խորհրդի գործունեության) համար:

Պարբերաբար տեղի են ունեցել դասղեկների սեմինար-խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են դասղեկների և դասվարների կատարած աշխատանքները, բացահայտվել են աշխատանքում տեղ գտած թերությունները, ցուցաբերվել է գործնական օգնություն:

Կազմակերպվել են բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ, դասղեկական ժամերին քննարկվել են պլանով նախատեսված թեմաներ: Բոլոր միջոցառումներին, այլ կազմակերպական հարցերին մեծ աջակցություն են ցուցաբերել ծնողական խորհրդի անդամները: Տարվա ընթացքում պարբերաբար տեղի են ունեցել ծնողական խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են դպրոցին և ծնողին հուզող հարցեր:

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարված աշխատանքները հիմնականում տվել են իրենց արդյունքները: Նրանք մեծ սիրով են մասնակցել դպրոցում կազմակերպվող գրեթե բոլոր միջոցառումներին:

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված տոնական և հիշատակի օրերին: Բացի հիշարժան օրերից, տեղի են ունեցել նաև ուսուցանող և նպատակային այլ միջոցառումներ, ինչպիսիք են համապետական շաբաթօրյակը, ծնողական և աշակերտական խորհուրդների կողմից կազմակերպվող էքսկուրսիաները:

«Անմահները հրամայում են» խորագրով ընթերցանության մրցույթը նվիրվում է Պարույր Սևակի ծննդյան 99-ամյակին:

Մրցույթը մեկնարկել է դեկտեմբերի 1-ից: Ընթացել է 3 փուլով: Առաջին փուլում առանձնացվել է դասարանի լավ ընթերցողների թիմը, երկրորդ փուլում գրադարանում ընտրվել են լավագույնները՝ 5-ից 6 աշակերտ յուրաքանչյուր դասարանից /V-IX/:

Հունվարի 26-ին տեղի ունեցավ եզրափակիչ 3-րդ փուլը, որի արդյունքում պարգևատրվեց յուրաքանչյուր դասարանից լավ ընթերցող մեկ աշակերտ: Մրցույթը կազմակերպել և անցկացրել են դպրոցի գրադարանավար Ա.Պետրոսյանը, ՍԴԱԿ Ա. Հայրապետյանը, հայոց լեզվի ուսուցիչներ:

30.01.23թ. «Մեզ ոչինչ չի հաղթի» խորագրով միջոցառում 9-րդ «բ» դասարանում՝ նվիրված հայոց բանակի օրվան (դասղեկ՝ Թ. Սիմոնյան):

13.02.23թ. Տիրոջն ընդառաջ. 5-րդ ա և բ դասարանի աշակերտներն իրենց դասղեկների՝ Է. Սիրունյանի և Ա. Հայրապետյանի գլխավորությամբ ու ծնողների աջակցությամբ կազմակերպեցին տոնական միջոցառում դպրոցի բակում: Թե՛ տոնական սեղանը, և թե՛ երաժշտական մասը կրում էին օրվա խորհուրդը: Օրը լցվեց ուրախ ու տոնական տրամադրությամբ:

Փետրվարի 15-ին Վ.Սարոյանի անվան հ.138 հիմնական դպրոցում անցկացվեց շախմատի 17-րդ օլիմպիադայի դպրոցական փուլի մրցաշարը: Մասնակցում էին դպրոցի 2-8-րդ դասարանների 32 աշակերտներ: Համառ պայքարից հետո հաղթեցին լավագույն շախմատիստները՝ Խուրշուդյան Էդգար, Վարդանյան Գեղամ, Հակոբջանյան Նարեկ, Ժամկոչյան Մանե:

2008 թվականից ՀՀ և Արցախի հանրապետությունում փետրվարի 19-ը հռչակված է գիրք նվիրելու օր: Մեր դպրոցը ևս անմասն չի մնում օրվա խորհրդից և յուրաքանչյուր տարի Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը նշանավորվում է որևէ միջոցառմամբ: Այս տարի ևս անցկացրեցինք միջոցառում «Հարստացնենք մեր գրադարանը» խորագրով: Յուրաքանչյուր դասարան մեկ գիրք նվիրեց դպրոցի գրադարանին, իսկ դասարաններում՝ աշակերտները միմյանց:

Մայրենի լեզվի օրը նշվում է 2000թ.-ի փետրվարի 21-ից որպես մայրենի լեզուների իրավունքների ճանաչման և գործածության օր:

Սիրենք ու պահպանենք մեր ոսկեղենիկ մայրենին: 2-րդ ա դասարանի աշակերտները մայրենիի օրը նշանավորեցին «Ազգ, լեզու, հայրենիք» խորագրով գեղեցիկ միջոցառմամբ (դասվար՝ Ա.Մկրտչյան):

Քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա շրջանակներում 2023 թ. մարտի 1-3-ը դպրոցի զինղեկ Արտակ Փամբուխչյանը 7-9-րդ դասարաններում անցկացրել է թեմատիկ զրույցներ և վարժանք:

Մարտի 13-ին սարոյանցիները շնորհավորեցին 20-րդ դարի հանճարեղ բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 126-ամյակը: Ներկայացվեց Չարենց

բանաստեղծը, Չարենց մարդը և քաղաքացին։ Մեկ անգամ ևս բացահայտվեց և ամբողջացվեց նրա կերպարի ողբերգականությունը, հանճարի մեծությունը և բանաստեղծի ինքնագնահատումը (կազմակերպիչ՝ Ս. Խաչատրյան)։

Ապրիլի 3-ին դպրոցում Երևան քաղաքի փրկարարական վարչության, բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ մայոր Ա.Կարապետյանը և դպրոցի զինղեկ Ա. Փամբուխչյանը իրականացրեցին դասախոսություն «Բնակչության վարվելակերպը երկրաշարժի ժամանակ» թեմայով։

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա առիթով դպրոցի տարածքը և տարածքում տեղակայված Վիլյամ Սարոյանի կիսանդրին մաքուր պահելու համար ապրիլի 15-ին կազմակերվեցին մաքրման աշխատանքներ՝ շաբաթօրյակի ձևով (ՄԿԱ, ՍԴԱԿ, աշակերտական խորհուրդ, դասղեկներ)։

17.04.2023թ. «Քո արվեստը դպրոցում» մշակութային ծրագրի շրջանակներում մեր դպրոցի աշակերտական խորհուրդը ՍԴԱԿ Ա. Հայրապետյանի ուղեկցությամբ հանդիպեց տաղանդավոր, վաստակաշատ, ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթևոսյանի հետ։ Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում։

04.04.-18.04.23թ դպրոցի 1-5-րդ դասարաններում իրականացվեցին դասընթացներ՝ «Քաղաքավարության, վարքի կանոնները դպրոցում» թեմայով (ՍԴԱԿ, դասղեկներ և դասվարներ)։

18.04.2023թ.-ին 3-րդ Ա դասարանի սովորողները ներկայացրեցին «Աշխատանքը մայրն է ամեն բարիքի» թեմայով միջոցառումը (դասվար՝ Կ. Հարությունյան)։

Սիրով արարեց Աստված լույսը,որ նրա մեջ ծաղկի հավատն ու հույսը…

Այս խորին խորհրդով 20.04.23թ. կայացավ 2_րդ բ դասարանի (դասվար՝ Մ. Սաֆարյան) «Գյուղն է կանչել» խորագրով միջոցառումը՝ ողողված ազգային շնչով, մարդկային մաքուր ու բարձր արժանիքներով։ Գովելի ու գնահատելի էին դասվար Մ. Սաֆարյանի և երաժշտության ուսուցչուհի Լիանա Ավետիսյանի բազմաբովանդակ աշխատանքը։

21.04.23թ. բարոյականության դաս-միջոցառում 3-րդ բ դասարանում (դասվար՝ Ե. Բարսեղյան) «Բարին կամեցիր, որ հասնես բարուն» վերնագրով։ Միջոցառումը ամփոփիչ էր՝ հագեցած հայ բանահյուսության հրաշալի գոհարներով։ Թե՛ դպրոցական կոլեկտիվը, և թե՛ ծնողական խորհուրդը բարձր գնահատեցին դասվարի և երաժշտության ուսուցչուհի Լիանա Ավետիսյանի անմնացորդ նվիրումն ու հրաշալի աշխատանքը։

Այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ «Հիշում եմ և պահանջում» ապրիլի 24-ին։ Դպրոցի 7-9-րդ դասարանների աշակերտները ծաղիկներ են խոնարհել անմեղ զոհերի հիշատակին։

03.05.2023թ. մեր դպրոցի 8-րդ դասարանցիները դասղեկ Հ. Շոլինյանի և ծնողխորհրդի անդամների հետ մասնակցեցին Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության կազմակերպած ճանաչողական արշավին։ Երեխաները եղան Շենգավիթ վարչական շրջանի թանգարաններում, երկհարկանի բացօթյա ավտոբուսով շրջեցին Երևանում։ Էքսկուրսիան շատ բովանդակալից ու հետաքրքիր էր։

11.05.2023թ Երևանի Գուրգեն Մարգարյանի անվան 94 ավագ դպրոցում անցկացվեց աշակերտական համաժողով՝ նվիրված Երևան քաղաքի հիմնադրման

2805-ամյակին և հայոց մայրաքաղաքներին: Համաժողովին մասնակցեցին նաև Վիլյամ Սարոյանի անվան հ. 138 դպրոցի 7-րդ բ դասարանի աշակերտներ Դավիթ Խուրշուդյանը, Գեորգի Գյոլեցյանը, Գայանե Գրիգորյանը, Մանե Ղանդիլյանը, Եվա Մկրտչյանը: Մեր սաներն արժանացան շնորհակալագրերի:

11.05.2023թ. կայացավ առաջին բ դասարանի (դասվար Հ. Մելոյան) հաշվետու միջոցառումը՝«Բարև ,ես գիրքն եմ» վերնագրով: Առաջին դասարանցիները բեմական հրաշալի խաղով, հագեցած երաժշտական կատարումներով, բովանդակալից խոսքով ներկայացրին տարվա ընթացքում իրենց ձեռք բերած գիտելիքները: Դպրոցի տնօրեն Լուիզա Հովհաննիսյանը իր գնահատանքի խոսքը հղեց դասվար Հ. Մելոյանին և երաժշտության ուսուցչուհի Լ. Ավետիսյանին՝ ևս մեկ անգամ փաստելով,որ դպրոցը կանգուն է այնքան ժամանակ,քանի դեռ ունի նման հենասյուներ:

12.05.2023թ. առաջին ա դասարանի (դասվար Շ. Տոնոյան) հաշվետու միջոցառումն էր՝ «Հրաժեշտ այբբենարանին» վերնագրով: Երեխաները իրենց հեռուստահաղորդման միջոցով ներկայացնում էին սարոյանցիների հեքիաթային մեկ օրը: Միջոցառումը շատ բովանդակալից, ուրախ ու երաժշտական էր: Դպրոցի տնօրեն Լուիզա Հովհաննիսյանի խոսքը հագեցած էր ջերմ ու գնահատանքի խոսքերով՝ուղղված դասվար Շ. Տոնոյանին, երաժշտության ուսուցչուհի Լ. Ավետիսյանին և դասարանի ծնողներին՝ դպրոցի կողքին լինելու և աջակցելու համար:

16.05.2023թ. տոն էր 4-րդ ա դասարանում: Աշակերտները (դասղեկ՝ Ա. Սիրեկանյան) «Միասնական հայրենիք» վերնագրով հրաժեշտի հրաշալի միջոցառում էին ներկայացնում՝ հագեցած սրտառուչ խոսքով, երգ ու պարով, բեմական խաղով:

19.05.23թ. «Իմ հարազատ դպրոց» խորագրով հերթական միջոցառումն էր մեր դպրոցի կամարների տակ: 4-րդ բ դասարանի աշակերտները (դասղեկ՝ Ա. Գևորգյան) գեղեցիկ ու անկրկնելի խաղով, հարուստ խոսքով ևս մեկ անգամ ջերմացրին բոլորիս սրտերը:

22.05.23թ. 8-րդ ա դասարանում (դասղեկ՝ Հ. Շոլինյան) դաս-միջոցառում ֆիզիկայից՝ նվիրված մեծ ֆիզիկոս Իսահակ Նյուտոնին: Աշակերտները գեղեցիկ կերպարներով, հումորային դրվագներով ներկայացրին ֆիզիկոսի կյանքն ու գործունեությունը, ընդգծեցին ֆիզիկայի դերը մեր կյանքում:

23.05.23թ. 4-րդ գ դասարանի աշակերտները (դասղեկ՝ Ե. Բաղրամյան) «Ես հպարտ հայ եմ, ես անպարտ հայ եմ» խորագրով ներկայացրեցին հրաշալի միջոցառում՝ համեմված երգ ու պարով, բեմական ուրախ դրվագներով: Երեխաները իրենց 4 տարիների սովորածը կարողացան ներկայացնել հավուր պատշաճի:

24.05.23թ. դպրոցական երգչախմբի հաշվետու համերգ-միջոցառում: Երաժշտության ուսուցչուհի Լիանա Ավետիսյանը հրաշալի միջոցառմամբ, անթերի երաժշտական կատարումով ևս մեկ անգամ դրսևորեց իր մասնագիտական բարձր պատրաստվածությունը, հմտությունը, գործին նվիրվածությունը:

Հաշվետու միջոցառում կազմակերպեց նաև շախմատի ուսուցիչ Մ. Ղազինյանը: Մրցաշարին մասնակցեցին դպրոցի 2-4-րդ և բարձր դասարանների աշակերտներ: Ոգևորությունը մեծ էր, հետաքրքրությունը դեպի շախմատը ավելի լայն շրջանակներ ընդգրկեց: Դպրոցի սաները մասնակցել են նաև շախմատի 16-րդ քաղաքային օլիմպիադային, որն անց է կացվել շախմատի ակադեմիայում: Այնուհետև հունիսի 7-ին, Աջափնյակ վարչական շրջանի շախմատի դպրոցում տեղի ունեցավ շախմատի բաց առաջնությունը, որին մասնակցում էին Աջափնյակի թվով 16 դպրոցների աշակերտներ: Վիլյամ Սարոյանի անվան հ.138 հիմնական դպրոցի թիմը (Ժամկոչյան

Մանե, Հակոբջանյան Նարեկ, Վարդանյան Գեղամ) մասնակցեց առաջնությանը, պատվով հաղթահարեց սուր պայքարը և գրավեց 4-րդ տեղը:

Հունիսի 1-ը երեխաների պաշտպանության օրն էր: Այս օրը մեր դպրոցի կամարների տակ էլ էր մանկության կապույտ թռչունը իր բերկրանքն ու սերը տարածում: Դպրոցի բակում կազմակերպվել էր երաժշտական միջոցառում, սարոյանցիները ողջունեցին աշխարհի մանուկներին՝ ցանկանալով խաղաղություն:

Ուսումնական տարին ավարտվեց, սակայն չավարտվեց դպրոցի աշխատանքը: Սկսվեցին ավարտական քննությունները:

Ուսումնական տարվա ավարտին 9-րդ դասարանցիները բարեհաջող հանձնեցին ավարտական քննությունները և փոխված կարգի համաձայն՝ առցանց կազմակերպվեց նրանց վկայականների հանձնումը:

Դպրոցի աշխատանքները չեն սահմանափակվում նշված միջոցառումներով: Շարունակական և հետևողական աշխատանքի արդյունքում հասնում ենք մեր առջև դրված նպատակին, որն է՝ ապագա քաղաքացու ինքնաճանաչումը, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորումը, զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ազատ և համակողմանի զարգացած ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:

Այսօր առավել, քան երբևէ անհրաժեշտ է ձևավորել ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք ունեցող սերունդ:

Դպրոցն այն օղակն է, որտեղ երբեք չի ավարտվում աշխատանքը, այն սկսվում է նոր ավյունով ու նոր մտահղացումներով:

31.08.2022թ.

ՄԿԱ դպրոցի տնօրենի տեղակալ՝ Ս. Խաչատրյան